2019 թվականի մարտի 10-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Սբ. Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը: Մեծ Պահքի առաջին՝ Արտաքսումի կիրակիի խորհրդի մասին հավուր պատշաճի քարոզ խոսեց Վիրահայոց թեմի առաջնորդը:

Հավարտ Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ մարտի 8-ին վախճանված Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիկոպոս Մութաֆյանի համար:

Ներկա հոգևոր դասը և հավատավոր ժողովուրդն աղոթք բարձրացրեցին առ Աստված հոգելույս Մեսրոպ Բ Պատրիարքի հոգու խաղաղության և հանգստության համար:

Նույն օրը Վիրահայոց թեմի առաջնորդը Արմավիրի թեմի Արտիմեդ համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցում մասնակցեց "Հին և նոր Արտիմեդ" գրքի շնորհանդեսին:

Մխիթարեան Միաբանութեան Գլխաւոր Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ Կաթողիկոսը